ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հոկտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

150
(2630)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 118

2020թ.-ին բռնկված կորոնավիրուսի համավարակի պատճառով օրվա իշխանության ու, մասնավորապես, վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ սահմանադրական բարեփոխումների քողի ներքո Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Հրայր Թովմասյանին պաշտոնանկ անելու նպատակները հօդս ցնդեցին: Թեեւ իշխող «Քաղաքացիական պայմանագիրը» Թովմասյանին, այնուամենայիվ, զրկեց ՍԴ նախագահի պաշտոնից, բայց ՍԴ անդամությունից հեռացնելու մեխանիզմներ այդպես էլ չգտավ: Նիկոլ Փաշինյանը Հրայր Թովմասյանին Սերժ Սարգսյանի դրածո ու լատենտ Հանրապետական էր համարում եւ որեւէ կերպ չէր պատրաստվում հանդուրժել, որ ՍԴ-ում կարող է դե յուրե անդամակցությունը դադարեցրած, բայց դե ֆակտո կուսակցական անձ լինել: Նույն Նիկոլ Փաշինյանը, սակայն, այժմ որեւէ խնդիր չի տեսնում, ավելին՝ գուցե ողջունում է, որ բոլորովին վերջերս կուսակցականի կրծքանշանի արժանացած Կարեն Անդրեասյանը, որ, իր խոսքերով, ոգեշնչվում է Փաշինյանի լուսանկարից, կարող է Բարձրագույն դատական խորհրդում հայտնվել, ավելին՝ նախագահել Բարձրագույն դատական խորհուրդը:

Բայց հանուն արդարության նշենք, որ, ի տարբերություն Անդրեասյանի, որ կարեւոր որոշումներ կայացնելուց առաջ ակնդետ նայում է Փաշինյանի՝ իր աշխատասենյակի պատից կախված լուսանկարին, Թովմասյանը գոնե արտաքուստ ՍԴ նախագահ եղած ժամանակ անձի ֆետիշացմամբ չէր զբաղվում: Արձանագրենք նաեւ, որ իրավապահ համակարգի ոչ կուսակցական լինելու մասին մանիպուլյատիվ հայտարարություններով Փաշինյանը նորից ու նորից ստել է:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորընտիր նախագահ Վահագն Հովակիմյանի ստացած իրավաբանի դիպլոմը բազմաբնույթ հարցեր է առաջացնում. կարծես թե այն ձեւական փաստաթուղթ է: Նրա կենսագրության մեջ նշված է, թե 2021թ. ավարտել է Երեւանի Մովսես Խորենացու անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը եւ ունի իրավաբանի որակավորում, սակայն բացակայում է տեղեկությունը, թե որ թվականին է բուհ ընդունվել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Երեւանի Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտոր Արթուր Աղաբաբյանը նշեց, թե «2017-2018 ուսումնական տարին է ընդունվել, տեղափոխվել է ԵՊՀ-ից, սովորել է հեռակա կարգով»: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաեւ Վահագն Հովակիմյանի մամուլի խոսնակ Սեդա Ղուկասյանին: «Վահագն Հովակիմյանը 1996-2000 թվականներին սովորել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ քաղաքագիտության ֆակուլտետում: Ուսումնառությունը կիսատ է մնացել վերջին կիսամյակի վարձավճարի պատճառով: Հետագայում՝ 2018 թվականին, ԵՊՀ-ից ակադեմիական թերթիկ է վերցրել, որտեղ արտացոլված են եղել իր առաջադիմության տվյալները, եւ ընդունվել է Մովսես Խորենացու անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետ՝ հեռակա ուսուցմամբ: Հաշվի առնելով կիսատ մնացած ուսումնառությունը՝ տեղափոխվել է երրորդ կուրս: Ուսումնառությունն ավարտել է 2021ին»: Այստեղ էլ մեկ այլ հարց է առաջանում. որքանո՞վ է ԵՊՀ-ում ստացած փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ քաղաքագիտության ֆակուլտետը համապատասխանում Մովսես Խորենացու համալսարանում իրավագիտության ֆակուլտետին, որտեղ էլ ավարտելով՝ ստացել է իրավաբանի որակավորումը: Իսկ եթե նա չի ավարտել Սոցիոլոգիայի բաժինը, ինչո՞ւ է իր պաշտոնական կենսագրության մեջ նշել այդ մասնագիտության մասին: Սա պաշտոնեական կեղծիք է: Ամեն դեպքում, խիստ կասկածահարույց է Վահագն Հովակիմյանի՝ իրավաբանի դիպլոմի ձեռք բերման գործընթացը, որով պետք է զբաղվի ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը: ⇨ էջ 3

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը մինչ օրս անգործ է: 2022 թվականի սեպտեմբերի 15-ին պաշտոնին հրաժեշտ տված նախկին գլխավոր դատախազը ոչնչով չի զբաղվում, իսկ թե ինչու, եւ ինչքան կտեւի այս պարապուդը, դժվար է ասել: Իհարկե, տարբեր տեղեկություններ սպրդեցին նրա ու քաղաքական իշխանության հարաբերությունների, ձեռք բերված պայմանավորվածությունների մասին, սակայն վերջին պահին ամեն ինչ իրար է խառնվել: Կարելի է ասել, որ Արթուր Դավթյանի եւ քաղաքական իշխանությունների հարաբերություններն այդքան էլ լավ չեն. նրան դեռ որեւէ այլ աշխատանք կամ պաշտոն չեն առաջարկել: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2013 թվականի սեպտեմբերի 13-ին, երբ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը հրաժեշտ տվեց պաշտոնին, բավականին սրտառուչ քայլ կատարեց՝ համբուրելով դատախազության դուռը, ձեռքերը միացրեց, ինչպես աղոթքի ժամանակ, խոնարհվեց եւ հեռացավ դատախազությունից, սակայն Արթուր Դավթյանը հեռացավ առանց խոնարհվելու ու աղոթելու եւ հիմա էլ պարապուրդի մեջ է:



ՀՀ հաշվեքննիչ պալատը ստուգումներ է իրականացրել էկոնոմիկայի նախարարությունում եւ մի շարք անհամապատասխանություններ հայտնաբերել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախարարությունը պետական աջակցության ծրագրով սուբսիդավորվող վարկերը նախատեսվածից բարձր տոկոսադրույքով է տրամադրել ֆերմերներին: Օրինակ՝ Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների եւ հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրով սուբսիդավորումը պետք է իրականացներ այնպիսի չափաքանակով, որ վարկերը շահառուներին տրամադրվեին 2 տոկոս տոկոսադրույքով, իսկ սահմանամերձ համայնքների տնտեսավարողներին եւ կոոպերատիվներին՝ 0 %, սակայն թվով 110 վարկերից 3-ի սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որ վարկերը շահառուներին տրամադրվել են 5 տոկոս տոկոսադրույքով՝ նախատեսված 2 տոկոսի փոխարեն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում նախարարությունում ներքին աուդիտի համակարգը չի գործել: «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հանրային հատվածի կազմակերպության ղեկավարը պետք է ապահովեր կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը եւ գործունեությունը, որը, ըստ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, պետք է գործեր նախարարի ենթակայության ներքո: Ներքին աուդիտի իրականացման ստորաբաժանում նախարարության կառուցվածքում, սակայն, չի ստեղծվել, իսկ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ ներքին աուդիտը իրականացնելու համար հրավիրված անձանց գնման ընթացակարգեր չի կազմակերպվել:

ԱՆՊԱՇՏՊԱՆ ԵՐԿԻՆՔ

ԹԻՐԱԽՈՒՄ ՀՕՊ ՀԱՄԱԿԱՐԳՆ Է

44-օրյա պատերազմի ընթացքում հասարակության կողմից ամենից հաճախ հնչող արտահայտությունն «օդը փակեմ» էր: Պատերազմից ուղիղ երկու տարի անց, ցավոք, ականատեսն ենք, որ ոչ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի օդը փակ չէ: Առաջադրանքը նաեւ վերջին՝ սեպտեմբերի 13-ի պատերազմական գործողություններն էին, ինչի ժամանակ հակառակորդը տարատեսակ զենքերի հետ մեկտեղ նորից անօդաչու թռչող սարքեր էր կիրառել: «Հենակետ» վերլուծական կենտրոնի ղեկավար, ռազմական փորձագետ Վիտալի Մանգասարյանի փոխանցմամբ՝ հայտնի չէ՝ պատերազմից հետո 2 տարվա ընթացքում Պաշտպանության նախարարությունը հակաօդային պաշտպանության ոլորտում ինչ քայլեր է իրականացրել: Վերջին նորությունը, ինչի մասին հասարակությանը տեղեկացվել է, «Մի-8» ուղղաթիռների ձեռքբերումն է, ինչը հակաօդային պաշտպանության տրամաբանության մեջ դիտարկել չի կարելի: Փորձագետի փոխանցմամբ՝ սեպտեմբերի 13-ի էսկալացիայի ժամանակ անգամ հակառակորդը մեր հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) համակարգերը թիրախավորել ու որոշակի հաջողություններ է հասել: Մանգասարյանը մեկ այլ կարեւոր հանգամանքի վրա է ուշադրություն հրավիրում. «Շատ լուրջ պետք է ուսումնասիրենք ու ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, թե ինչու են մեր ՀՕՊ համակարգերն այդքան մոտ գտնվում շփման գծին կամ բնակավայրերին: Եթե նախկինում ՀՕՊ-ը, պայմանական ասենք, Գորիսում էր տեղադրված, ապա դա հնարավորություն էր տալիս, որ Արաքսի հովտից որոշակի հեռավորության վրա խնդիր կարողանայինք լուծել, բայց եթե սահմանն արդեն Գորիս քաղաք է հասել, ու թշնամին մի քանի կիլոմետրի վրա է գտնվում, ապա ռազմական տեսանկյունից բնակավայրին մոտ ՀՕՊ համակարգ տեղակայելը ճիշտ չէ»:

Ըստ նրա՝ հակառակորդը ՀՕՊ համակարգը շարքից հանելուց հետո, բնական է, փորձելու է այլ փուլերի անցնել: Չի բացառում՝ եթե ամեն բան լրջանա, ապա կարող է անգամ ռազմական ավիացիա կիրառել: «Եթե փորձենք հասկանալ նրանց հեռահար նպատակները, ապա չի բացառվում, որ մեզ մեծ վնասներ հասցնելու համար ռազմական տարբեր ավիացիա կիրառելու նպատակներ ունեն»:

Մեր զրուցակիցը ՆԱՏՕ-ի բանակի օրինակով է բացատրում՝ հակամարտության ընթացքում հակառակորդը նախ փորձում է, այսպես ասած, օդը մաքրել ու արդեն ավիացիա կիրառելու համար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Մանգասարյանի հետ նաեւ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի կողմից հանրայնացրած, բայց այդպես էլ կյանքի չկոչվող գաղափարի՝ 3-ամսյա վարժանքները 25-օրյայով փոխելու մասին խոսեցինք:

Պապիկյանի ներկայացրած գաղափարն, ասում է փորձագետը, խնդրահարույց է, ու ո՞րն է նման առաջարկ հրապարակ բերելու նպատակը:

«Մեր առջեւ ի՞նչ նպատակ ենք դնում. որ պահեստազորայիններին վարժեցնենք ու նրանք նորանոր հմտություններ ձեռք բերե՞ն:

Եթե դա է, ապա ինչո՞ւ պետք է պարտադիր մարտական պատրաստվածություն անցնեն, այն էլ՝ 14 օր»,- բարձրաձայնում է մեր զրուցակիցը:

Ինչ վերաբերում է դեռեւս միսուարյուն չստացած նախագծին, որ, ըստ Պապիկյանի, հնարավորություն է տալու, որ քաղաքացին ինքը կորոշի՝ երբ, տարվա որ ժամանակահատվածում վարժանքի մեկնի, ապա մեր զրուցակիցը նորից է հարց բարձրացնում՝ ինչպե՞ս է հարցը կարգավորվելու, եթե, օրինակ, պահեստազորայինների մեծ մասը որոշի օգոստոս ամսին վարժանքի մեկնել:

Եռամյա հավաքների ժամկետը կրճատելու ու դրանք էլ ավելի արդյունավետ դարձնելու մասին գործադիրը դեռեւս միայն հայտարարել է: Դա հավաստող օրենսդրական նախագիծ մինչեւ այս պահը չի շրջանառվել: Պաշտպանության նախարարության ու կառավարության պաշտոնական կայքէջերում եռամյա վարժանքները 25-օրյայի վերածելու մասին որեւէ տեղեկություն, առավել եւս՝ նախագիծ ու օրենսդրական փաթեթ չկա:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՎՈՐԸ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ

Ադրբեջանի ու Թուրքիայի նախագահները երեկ՝ հոկտեմբերի 20-ին, Կովսականում միջազգային օդանավակայանի կարմիր ժապավենները են կտրել: ArmLur.am-ը գրել էր, որ հայկական Կովսականում բացված օդանավակայանի առաջին ուղեւորը լինելու պատիվը Թուրքիայի նախագահ Ռեջեպ Թայիփ Էրդողանինն է եղել:

Իրողությանը հայ հասարակությունը որեւէ կերպ չի արձագանքել՝ ո՛չ դրական, ո՛չ բացասական: Իրականությունը, սակայն, այն է, որ 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ոչ միայն Կովսականը (Զանգելան), այլ նաեւ Սանասարն (Կուբաթլու) Ադրբեջանի վերահսկողության տակ չպետք է անցնեին: Այդ մասին հայտարարության մեջ որեւէ կետ չկա: Այս մասին դեռեւս նախորդ տարվա՝ 2021-ի օգոստոսի 24-ին՝ Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանն էր բարձրաձայնել ու հարց ուղղել վարչապետ Նիկոլ Փաշինյանին, թե այդ ինչ գաղտնի փաստաթղթի հիման վրա են հայկական զորքերը ոչ միայն Կովսականից ու Սանասարից, այլ նաեւ Գորիս-Կապան ավտոճանապարհի մի հատվածից (21 կմ-ից) հետ քաշվել: Ի պատասխան՝ վարչապետ Փաշինյանն ասել էր, որ, այո, ադրբեջանական կողմի հետ այդ մասով բանավոր պայմանավորվածություն են ունեցել:

Այսօր արդեն ականատեսն ենք լինում, որ Արցախի Հանրապետության՝ իր վերահսկողության տակ անցած տարածքներում, որոնց մի մասի նկատմամբ, ի դեպ, նոյեմբերի 9-ի հայտարարությամբ պաշտոնական Բաքուն վերահսկողություն չպետք է ունենար, Ադրբեջանը լայնածավալ շինարարություն է իրականացնում՝ շահագործման ավտոճանապարհներ, երկաթգիծ, թունելներ, կամուրջներ ու օդանավակայաններ հանձնելով:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Եվրամիության դիտորդական առաքելությունը Հայաստանի սահմաններին մշտադիտարկումը կիրականացնի հիմնականում ճանապարհային պարեկների եւ հսկող սարքավորումների միջոցով, եւ դիտորդական խումբը կենթարկվի Բրյուսելի կենտրոնակայանին, այլ ոչ թե կողմերին. ադրբեջանական «Թուրան» գործակալության հետ զրույցում ասել է Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը:

Հարցին, թե արդյոք արդյունքները կարող են օգտակար լինել, եթե մշտադիտարկումն անցկացվում է միայն հայկական կողմում, Եվրամիության պաշտոնյան հիշեցրել է, որ նախագահ Ալիեւը «հստակ հասկացնել է տվել, որ Բաքուն համաձայն է այդ առաքելության հետ համագործակցել այնքանով, որքանովի առնչվում է իրեն»:

«Մենք ակնկալում ենք, որ ադրբեջանական կողմը կհամագործակցի առաքելության հետ տեղում համապատասխան դերակատարների միջեւ կանոնավոր շփումների միջոցով, առանց ադրբեջանական կողմում առաքելության անդամների ֆիզիկական ներկայության: Հուսով ենք, որ այս առաքելությունը կծառայի նաեւ կողմերի միջեւ վստահության ձեւավորմանը», - հավելել է Կլաարը:

«Այժմ կարեւոր է վերջնականապես շրջել թշնամության էջը, խուսափել նախկին սխալներից եւ դրական հռետորաբանություն ապահովել կողմերի միջեւ՝ հանուն խաղաղ ապագայի»,- հայտարարել է դիվանագետը՝ վստահեցնելով, որ այդ ուղղությամբ ԵՄ-ն շարունակում է լուրջ փոխգործակցությունը երկու կողմերի հետ:

«ԼՈՒՐՋ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Երեւանում տեղի ունեցող Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի ընդլայնված կազմով հանդիպմանը Հայաստանի վարչապետը խոսել է «լուրջ հաջողությունների» մասին եւ վիճակագրություն հրապարակել:

Նիկոլ Փաշինյանի փոխանցմամբ՝ այս տարի՝ հունվարից մինչեւ օգոստոս ընկած ժամանակահատվածում, Հայաստանի ապրանքաշրջանառությունը ԵԱՏՄ մյուս երկրների միջեւ կազմել է 2.8 միլիարդ դոլար, ինչը 74 տոկոսով ավելի է, քան նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը:

«ԵԱՏՄ-ի կայացման գործընթացում մենք լուրջ հաջողությունների ենք հասել: Ստեղծվել է տարողունակ ընդհանուր շուկա, նկատելիորեն աճել են փոխադարձ առեւտրի ցուցանիշները», - հավելել է Հայաստանի վարչապետը եւ ընդգծել՝ Հայաստանից արտահանումը ավելացել է 2 անգամ, իսկ ներկրումը՝ 58 տոկոսով:

Վարչապետ Փաշինյանն իր ելույթը ամփոփել է՝ վերահաստատելով հայկական կողմի պատրաստակամությունը՝ ակտիվորեն համագործակցելու Միության անդամ բոլոր պետությունների հետ՝ ի շահ եվրասիական ինտեգրման առաջմղման:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Զինծառայողների սոցիալական ապահովության ոլորտում համագործակցության շրջանակում հոկտեմբերի 19-20-ը Հայաստան էր այցելել Վրաստանի ՊՆ սոցիալական հարցերի եւ հոգեբանական աջակցության վարչության պատվիրակությունը:

Ինչպես հայտնում են Պաշտպանության նախարարությունից, պատվիրակությանն ընդունել է ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետ Ալեքսանդր Ավետիսյանը: Գործընկերներին է ներկայացվել ՀՀ օրենսդրությամբ զինծառայողների եւ նրանց ընտանիքների համար սահմանված արտոնությունների ու երաշխիքների համակարգը, այդ ուղղությամբ պետության կողմից իրականացվող ծրագրերը, քննարկվել են զինծառայողների սոցիալական պաշտպանությանն առնչվող այլ հարցեր:

Հանդիպման արդյունքներով պայմանավորվածություններ են ձեռք բերվել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով հետագա համագործակցության վերաբերյալ:

Վրաստանի ՊՆ սոցիալական հարցերի եւ հոգեբանական աջակցության վարչության պատվիրակությունը հանդիպումներ է անցկացրել նաեւ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամում եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում:

ՕԳՆԱԿԱՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Երեկ հայտնի դարձավ, որ դատարանը կալանավորել է նաեւ դատավոր Արուսյակ Ալեքսանյանի օգնականին:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ իրավապահների տեսադաշտում է հայտնվել նաեւ դատավոր Արուսյակ Ալեքսանյանի օգնականը: Հայտնել էինք, որ նա ձերբակալվել է:

Նշենք, որ աղմկահարույց այս գործով կալանավորված են նաեւ դատավոր Արուսյակ Ալեքսանյանն ու փաստաբան Էրիկ Ալեքսանյանը: Արուսյակ Ալեքսանյանի օգնականի փաստաբան Գարիկ Գալիկյանը խորը ցավոց հայտնեց, որ կալանավորվածը 22-ամյա աղջիկ է, ինչի համար ինքը ցավում է: Ի դեպ, երիտասարդ օգնականին կալանքի տարած դատավորը Թմբուկ անվանմամբ հայտնի Դավիթ Արղամանյանն է:

Ո՞վ է նա: 2018 թվականի նոյեմբերի 24-ին, երբ Նիկոլ Փաշինյանը նախընտրական երթ էր անում Երեւանում, Արղամանյանը, ոչ ավել, ոչ պակաս, հայտնի «դըմփ դըմփ հու»-ի թմբուկն էր զարկում: Դրանից հետո նշանակվեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի օգնական: 2021 թվականին էլ նշանակեցին մինչդատական քրեական վարույթով դատավոր:

ԿԱՍԿԱԾԱՀԱՐՈՒՅՑ

ՎԱՀԱԳՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԻ ԴԻՊԼՈՄԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորընտիր նախագահ Վահագն Հովակիմյանի ստացած իրավաբանի դիպլոմը բազմաբնույթ հարցեր է առաջացնում: Մասնավորապես, որպես ուրբերորդ գումարման խորհրդարանի պատգամավորի նրա ներկայացրած կենսագրության մեջ, որը հրապարակված է Ազգային ժողովի պաշտոնական կայքում, նշված է, թե նա 2021թ. ավարտել է Երեւանի Մովսես Խորենացու անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը եւ ունի իրավաբանի որակավորում, սակայն բացակայում է տեղեկությունը, թե որ թվականին է բուհ ընդունվել: Սա ինքնին ենթադրում է, որ նա 2018 թվականին, երբ խորհրդարանական արտահերթ ընտրություններից հետո ընտրվել էր պատգամավոր, արդեն սովորում էր վերոնշյալ համալսարանում: Նախկինում նրա ներկայացրած կենսագրության մեջ բացակայում է ուսանող լինելու մասին որեւէ տեղեկություն: Այդ կենսագրության մեջ միայն նշված են տեղեկությունները նախորդ կրթության մասին: Այս խորհրդավորությունը «Ժողովուրդ» օրաթերթի մոտ հարցեր է առաջացրել, եւ մենք զրուցեցինք Երեւանի Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտոր Արթուր Աղաբաբյանի հետ:

-Պարոն ռեկտոր, ո՞ր թվականին է ընդունվել Վահագն Հովակիմյանը Ձեր ղեկավարած բուհ:

-Եթե չեմ սխալվում, 2017-2018 ուսումնական տարին է ընդունվել:

-Ավարտե՞լ է բակալավրի աստիճանով:

-Նա տեղափոխվել է ԵՊՀ-ից:

-Իսկ առկա՞ է սովորել, թե՞ հեռակա:

-Հեռակա:

-Հաճախե՞լ է դասերին:

-Այս պահին չեմ կարող պատասխանել:

Ի՞նչ է ստացվում. եթե պատգամավորը ավարտել է հեռակա բաժինը, ապա պետք է 5 տարի սովորած լիներ, հետեւաբար պետք է ընդունված լիներ մասնավոր այդ համալսարանը 2016 թվականին, սակայն, ինչպես արդեն նշեցինք, նախորդ կենսագրությունների մեջ որեւէ բուհ ընդունվելու մասին որեւէ տեղեկություն առկա չէ: Ընդգծենք նաեւ՝ 2014-2016 թվականներին Հովակիմյանն աշխատել է «Ժողովուրդ» օրաթերթում որպես փոխխմբագիր, եւ մենք՝ որպես գործընկերներ, որեւէ բան չենք իմացել նրա՝ որեւէ համալսարանում ուսանելու մասին. նա երբեք դասի չի գնացել, ստուգարքի, քննության չի մասնակցել:

«Ժողովուրդ» օրաթերթը, ամեն դեպքում, դիմեց Վահագն Հովակիմյանի մամուլի խոսնակ Սեդա Ղուկասյանին՝ հարցնելով, թե որ թվականին է ընդունվել, ինչպես է ավարտել Իրավաբանության ֆակուլտետը, ամենակարեւորը՝ ինչու նախորդ կենսագրությունների մեջ երբեւէ նշված չի եղել, որ նա սովորում է: Խոսնակը պատասխանել է. «Վահագն Հովակիմյանը 1996-2000 թվականներին սովորել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ քաղաքագիտության ֆակուլտետում: Ուսումնառությունը կիսատ է մնացել վերջին կիսամյակի վարձավճարի պատճառով: Հետագայում՝ 2018 թվականին, ԵՊՀ-ից ակադեմիական թերթիկ է վերցրել, որտեղ արտացոլված են եղել իր առաջադիմության տվյալները, եւ ընդունվել է Մովսես Խորենացու անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետ՝ հեռակա ուսուցմամբ: Հաշվի առնելով կիսատ մնացած ուսումնառությունը՝ տեղափոխվել է երրորդ կուրս: Ուսումնառությունն ավարտել է 2021-ին»:

Այստեղ էլ մեկ այլ հարց է առաջանում. որքանո՞վ է ԵՊՀ-ում ստացած փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ քաղաքագիտության ֆակուլտետը համապատասխանում Մովսես Խորենացու համալսարանում իրավագիտության ֆակուլտետին՝ իբրեւ մասնագիտություն, որտեղ էլ ավարտելով՝ պատգամավորը ստացել է իրավաբանի որակավորում: Եթե նա չի ավարտել ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ քաղաքագիտության ֆակուլտետը, ինչո՞ւ է իր պաշտոնական կենսագրության մեջ նշել այդ մասնագիտության մասին՝ ֆիքսելով, որ 1996-2000թթ ավարտել է ԵՊՀ-ն: Սա պաշտոնական կեղծիք է: Ամեն դեպքում, խիստ կասկածահարույց է Վահագն Հովակիմյանի իրավագիտական կրթությունը, ստացած իրավաբանի դիպլոմի ձեռք բերման գործընթացը, որով պետք է զբաղվի ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը: Մեզ մոտ տպավորություն է, որ ձեւական դիպլոմ է ձեռք բերել իշխանական պատգամավորը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՍՅՈՒՆԻՔԻՆ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն աշխատանքային այցով գտնվում է Ֆրանսիայի Հանրապետությունում: Ֆրանսիայի Օվերնյ Ռոն Ալպ նահանգի շրջանային խորհուրդը լիագումար նիստի ընթացքում կայացած քվեարկությամբ հաստատել է Սյունիքի մարզին 300 000 եվրո հատկացնելու նախագիծը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ

«Իրանը Հայաստանի եւ տարածաշրջանի անվտանգությունը համարում է իր անվտանգությունը, եւ Կապանում Իրանի գլխավոր հյուպատոսություն հիմնելու Իրանի կառավարության որոշումն այն կարեւորության դրսեւորումն է, որ ԻԻՀ-ն տալիս է հայ ժողովրդի հետ հազարամյա հարաբերություններին»,- ասաց Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը հոկտեմբերի 21-ին Կապանում գլխավոր հյուպատոսության բացման արարողությանն իր ելույթում:

ԿՆՔՎԵԼ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի հրավերով հոկտեմբերի 17-21-ը պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետություն է այցելել Արաբական Միացյալ Էմիրությունների պատվիրակությունը՝ Շարժայի ժառանգության ինստիտուտի նախագահ Ն. Գ. դոկտոր Աբդ Ալ-Ազիզ Ալ-Մուսալլամի գլխավորությամբ: Ինչպես «Արմենպրես»-ին հայտնում են ՀՀ-ում ԱՄԷ դեսպանությունից, պատվիրակության կազմում են Շարժայի ժառանգության ինստիտուտի միջազգային կապերի տնօրեն Ահմադ Ալ-Դահը եւ միջազգային կապերի տնօրենի տեղակալ Սեյֆ Ալ-Հաջրին:

Այցի ընթացքում ԱՄԷ պատվիրակությանն ընդունել է ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն՝ ընդգծելով երկու ժողովուրդների միջեւ առկա ամուր բարեկամական կապերը: Նաեւ շնորհակալություն է հայտնել այս տարի «Շարժայի ժառանգության օրեր» ամենամյա փառատոնին Հայաստանը որպես պատվավոր հյուր ընդունելու կապակցությամբ: Այցի ընթացքում հայկական կողմի հետ կնքվել է 2 համաձայնագիր:

ԱՋԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐԴԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի որդու գործով դատարանը որոշում է կայացրել: Ինչպես հայտնի է, 2021 թվականին ոստիկանության աշխատակցի նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքի դեմքի առթիվ քննվող քրեական գործով 2021թ. օգոստոսի 18-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից Ս. Ղուկասյանին առաջադրվել էր մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, եւ միջնորդություն ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Կալանավորման որոշումից անմիջապես հետո Սպարտակ Ղուկասյանը դիմել էր փախուստի. սեպտեմբերի 17-ին ոստիկանությունը նրա նկատմամբ հետախուզում էր հայտարարել, որից հետո Սպարտակ Ղուկասյանին հայտնաբերեցին եւ կալանավորեցին: Գործն ուղարկվեց դատարան, եւ, ահա, Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը այս գործով որոշել է. «Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի որդուն՝ Սպարտակ Վարդանի Ղուկասյանին մեղավոր ճանաչել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, եւ դատապարտել ազատազրկման՝ 7 (յոթ) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցել Սպարտակ Վարդանի Ղուկասյանի՝2021 թվականի օգոստոսի 19-ից մինչեւ նույն թվականի օգոստոսի 20-ը եւ 2021 թվականի նոյեմբերի 27-ից մինչեւ 2022 թվականի մայիսի 31-ը արգելանքի տակ գտնվելու ժամկետը եւ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 25 (քսանհինգ) օր ժամկետով:

Պատժի սկիզբը հաշվել 2022 թվականի մայիսի 31-ից:

Պատիժը պետք է կրի ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Սպարտակ Վարդանի Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնել անփոփոխ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ստանալու պահից մեկամսյա ժամկետում»:

Նախկին քաղաքապետի որդին ազատության մեջ է, որը մեզ հետ զրույցում հայտնեց նաեւ վերջինիս պաշտպան Ռուբեն Հակոբյանը՝նշելով, որ ակնհայտ անհիմն որոշում է, եւ այն ենթակա է բեկանման:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՃԻՌ

2022 թվականի հոկտեմբերի 19-ին Հակակոռուպցիոն դատարանը 28 անձի վերաբերյալ կայացրել է մեղադրական դատավճիռ կաշառքի դիմաց վարորդական իրավունքի վկայականներն ապօրինի ձեռք բերելու համար: Նրանք մեղավոր են ճանաչվել վերոնշյալ հանցանքի կատարման համար՝ դատապարտվելով տարբեր չափերի տուգանքների:

Գլխավոր դատախազությունը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված կարգով, դիմելու է Ոստիկանություն՝ քաղաքացիների կողմից ապօրինի ձեռք բերված վարորդական իրավունքի վկայականներն անվավեր ճանաչելու միջնորդությամբ:

Հիշեցնենք, որ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում հարուցված եւ Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական գործով քաղաքացիներին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նրանք օժանդակողի միջոցով Ճանապարհային ոստիկանության Երեւանի հաշվառման-քննական բաժնի վարորդական իրավունքի վկայականների հատկացման բաժանմունքի տեսուչին տարբեր չափերի կաշառք են տվել (մոտ 3 մլն տասը հազար դրամ)՝ ապօրինի ձեռք բերելով վարորդական իրավունքի վկայականներ (նախկին Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312-րդ հոդվածի 1-ին մասով եւ 313-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով):

2022 թվականի հունիսի 23-ին քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը հսկող դատախազի որոշմամբ հաստատվել եւ ուղարկվել էր դատարան:

ՄԻՔԱԶԳԱՅԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Վերջին շաբաթներին ադրբեջանական զորքերի կողմից հայ զինվորների ակնհայտ մահապատժի մասին պատմող երկու տեսանյութ էր հրապարակվել եւ լայնորեն տարածվել սոցցանցերում: Հետաքննական լրագրությամբ զբաղվող միջազգային «Bellingcat» գործակալությունը իրականացրել է տեսանյութերից մեկի վերլուծություն՝ տեղորոշելով այն եւ բացահայտելով մի քանի ապացույցներ, ըստ որոնց՝ տեսանյութերից մեկն արվել է Սեւ լճին հարող տարածքում:

Այդ տեսանյութն առաջին անգամ տեղադրվել է հոկտեմբերի 1-ին: Այն ցույց է տալիս զինվորական համազգեստով տղամարդկանց մի խումբ լեռան գագաթին, որը նրանք հենց նոր գրավել են: Տղամարդկանց մեկ այլ խումբ, որոնք գերի են ընկած եւ կրում են տարբեր զինվորական համազգեստներ, շարված են առանց զենքի:

Տեսանյութը լայնորեն տարածվել է ադրբեջանամետ ալիքներով, ինչը ցույց է տալիս ադրբեջանական զորքի կողմից հայ զինվորների մահապատիժը:

Հոկտեմբերի 3-ին Libnration-ի լրագրողներ Ալեքսանդր Հորնը եւ Ֆաբիան Լեբուքը նշում են, որ կադրերը Ադրբեջանի հետ սահմանին են՝ Սեւ լճից հարավ. «Վերլուծելով Telegram-ի անշարժ պատկերներից մեկը՝ տեղանքի վրա նկատեցինք նախշեր, որոնք համահունչ էին այն դիրքի հետ, որտեղից արվել էր լուսանկարը»:

Հետաքննող լրագրողները Google Earth ծրագրի միջոցով կարողացել են բացահայտել Սեւ լճի շրջակայքը, որը պարունակում է որոշ աշխարհագրական առանձնահատկություններ:

ԼՈՒՐԵՐ

ԴԻԵՐ՝ ԿԱՄՐՋԻ ՏԱԿ

Armlur.am-ին հայտնի է դարձել, թե ովքեր են Դավիթաշենի կամրջի տակ մահացած անձինք: Մահացած տղամարդկանցից մեկը ՌԴ քաղաքացի Տիգրան Վերեշչակն է, որը 21 տարեկան էր, իսկ մյուս մահացած անձը ՀՀ քաղաքացի Արսեն Այվազյանն է՝16 տարեկան: Shamshyan.com-ը գրել էր, որ երեկ առեղծվածային դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 22:30-ի սահմաններում ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ Դավիթաշենի կամրջի տակ դիեր կան: Տեղի ունեցածը ինքնասպանություն է, սպանություն, թե դժբախտ պատահար, պարզվում է: Իսկ քննչական բաժնում քրեական վարույթը նախաձեռնվել է սպանության հատկանիշներով:

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Արթուր Ասատրյանը դատի է տվել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին եւ դատարանից պահանջում է, որ դատարանը ստիպի 15.08.2022թ. իր եւ Աղասի Հովհաննեսի Հունանյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին թիվ 1031-Ա հրամանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 16.08.2022թ. Արթուր Աշոտի Ասատրյանին պաշտոնի նշանակելու մասին թիվ 1032-Ա հրամանը եւ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 16.09.2022թ. Արթուր Աշոտի Ասատրյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու եւ զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին թիվ 1223-Ա հրամանը վերացնել:

ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԵՆ

Ընդդիմադիր հասարակական քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանին ծեծի ենթակելու միջադեպի գործով իրավապահներն անձանց են տանում հարցաքննությունների: Տեսախցիկներն արձանագրել են, թե ինչպես են ծեծի ենթարկում Էդգար Ղազարյանին, սակայն տեսախցիկներով պարզ չի երեւում՝ ծեծի ենթարկող անձինք ովքեր են, ուստի իրավապահներն այս օրերին հարցաքննության են հրավիրում այն անձանց, որոնց մեքենաները տեսախցիկներով պարզ երեւում են: Ավելին, ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ հարցաքննության են հրավիրվում կասկածելի անձինք, որոնք, ըստ իրավապահների, հնարավոր է, դեպքի հետ կապ ունենան: Փաստ է մեկ բան, որ աղմկահարույց դեպքից անցել է երեք օր, սակայն մինչ օրս ծեծի ենթարկողները չեն հայտնաբերվել: Նշենք, որ ընդդիմադիր քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը տուժող է ճանաչվել իր նկատմամբ բռնության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում. նրա նկատմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Հիշեցնենք՝ հոկտեմբերի 18-ին անհայտ անձինք հարձակվել եւ ծեծի են ենթարկել Էդգար Ղազարյանին: Ըստ տուժողի՝ դեպքը տեղի է ունեցել իրենց շքամուտքի մոտ, երբ տուն էր վերադառնում վարսավիրանոցից: Ղազարյանը Շտապօգնության մեքենայով տեղափոխվել էր «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ հետազոտություն էր անցել: Նույն օրը ՔԿ-ում քրեական վարույթ է նախաձեռնվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից առողջությանը թեթեւ վնաս պատճառելու հատկանիշներով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք, որոնցից 8-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՆՔԵՐԸ ՔԱՆԴՎՈՒՄ ԵՆ

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ ԿԳՄՍ նախարարության եւ այդ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պատվիրատվությամբ ներկայումս Տավուշի մարզի տարածքում վերանորոգվում են մի քանի պատմամշակութային հուշարձաններ: Դիլիջան քաղաքի կենտրոնում ընթացքի մեջ է Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանի մասնաճյուղի շենքի հիմնանորոգումը: Այդ շենքը կառուցվել է 19-րդ դարի վերջին, այն ժամանակին հյուրընկալել է հայոց մշակույթի անվանի գործիչների: Դիլիջանի թանգարանի շենքի հիմնանորոգումը նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Ավարտին են մոտենում այդ կառույցի հողային հիմքերի ուժեղացման եւ նոր պատերի կառուցման աշխատանքները: Թանգարանի շենքի հիմնանորոգումն իրականացող վարպետներին հարցրի՝ նախատեսվում է արդյոք վերականգնել թանգարանի՝ փողոցի վրա գտնված փայտե բաց, գեղեցիկ պատշգամբը, որը փողոցով երթեւեկող բեռնատարի հարվածից քանդվել է 2019 թվականի հունիսի սկզբին: Վարպետներն ասացին, որ թանգարանի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում կառույցի բաց պատշգամբը վերականգնելու են:

Ավարտվել են Գոշավանք վանական համալիրի մեջ մտնող Սուրբ Աստվածածին եկեղեցու տանիքի ծածկերի վերանորոգման աշխատանքները: Լոռու մարզի տարածքում գտնվող Սանահին վանական համալիրի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում եւս նորոգման աշխատանքներ են իրականացվել: Սանահին եւ Գոշավանք վանական համալիրները գտնվում են Հայ առաքելական եկեղեցու(ՀԱԵ) հաշվեկշռում: ՀԱԵ-ն սփյուռքի եւ Հայաստանի հայ բարեգործներից պարբերաբար ֆինանսական մեծ նվիրատվություններ է ստանում, նաեւ մեծ հասույթներ է ունենում Գոշավանքում, Սանահին վանական համալիրում կրոնական գրքերի, մոմերի, հոգեւոր պարագաների վաճառքից, ՀԱԵ-ն ի վիճակի էր իր ֆինանսական միջոցներով վերանորոգելու այդ վանական համալիրները:

Տավուշի մարզի անտառներում գտնվող հնամենի վանքերը՝ Կիրանցը, Առաքելոցը, Ջուխտակ վանքը, Սրվեղի վանքը, Մշկավանքը եւ այլ հին վանքեր տասնամյակների ընթացքում քանդվում են, դրանց նորոգման համար տասնամյակներ շարունակ պետական բյուջեից ֆինանսավորում չի իրականացվում: Պետական բյուջեի գումարները պետք էր առաջնահերթ ուղղել մեր պատմության այդ արժեքավոր հուշարձանները փրկելու, նորոգելու, ոչ թե Հայ առաքելական եկեղեցու հաշվակշռում գտնվող, եկեղեցու կողմից օգտագործվող վանքերը վերանորոգելու նպատակով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՎԱՐՈՒՅԹ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ՝ ԹԻՐԱԽՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանի աշխատանքը վերջին շրջանում պարբերաբար հայտնվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի տեսադաշտում: Թե ինչու է Գեղամ Գեւորգյանը հիմա սկսել «հետաքրքրվել» քաղաքապետարանի գործելաոճով, թերեւս գաղտնիք չէ: Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը Գեղամ Գեւորգյանի մտերիմն է, եւ իր ղեկավարած հանձնաժողովն արդեն թվով երկրորդ վարույթն է հարուցել քաղաքապետարանի նկատմամբ: Ավելին, ArmLur.am-ը տեղեկացավ, որ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը հոկտեմբերի 11-ի որոշմամբ նախազգուշացում է տվել Երեւանի քաղաքապետարանին: Իսկ ինչո՞ւ էր քաղաքապետարանը զայրացրել հանձնաժողովին:

ArmLur.am-ը գրել էր, որ քաղաքապետարանից պահանջվել էր ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ինքնակամ կառույցների օրինականացման դիմումների վերաբերյալ տեղեկատվություն, «Քաղաքաշինություն» ընկերության եւ քաղաքապետարանի միջեւ կնքված բոլոր գործող պայմանագրերի պատճենները: Բացի այս, քաղաքապետարանը պետք է հանձնաժողովին ներկայացներ նաեւ Երեւանի քաղաքապետարանի կողմից «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին 2018 թվականի հունվարի 1-ից մինչ օրս տրամադրված ֆինանսավորումների եւ կատարողականների վերաբերյալ տեղեկատվություն: Այս տվյալները փոխանցելու համար քաղաքապետարանին տրվել էր ժամանակ՝ 5 աշխատանքային օր, սակայն քաղաքապետարանը պահանջված տեղեկատվությունը չի ներկայացրել սահմանված ժամկետում: Ըստ հանձնաժողովի՝ քաղաքապետարանի վարքագիծն առերեւույթ պարունակել է պետական մարմնի պարտականության խախտման հատկանիշներ, այդ իսկ պատճառով հոկտեմբերի 11-ի որոշմամբ Գեղամ Գեւորգյանը նախազգուշացում է տվել քաղաքապետարանին, ավելին՝ քաղաքապետարանին հանձնարարել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողով ներկայացնել պահանջված տեղեկատվությունը: Իսկ եթե այս հանձնարարությունները սահմանված ժամանակահատվածում չկատարվեն, ապա ենթակա են հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

Բացի այս, օրեր առաջ հայտնի դարձավ, որ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը եւս մեկ վարույթ է հարուցել քաղաքապետարանի նկատմամբ: Այս անգամ պատճառն ավտոբուսներն են: Ըստ հանձնաժողովի՝ 2021 եւ 2022 թվականների ընթացքում ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերով առերեւույթ սահմանվել են այնպիսի պահանջներ, որոնց առկայությունը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել գնման ընթացակարգերի հնարավոր մասնակիցների համար անհավասար պայմանների ստեղծմանը եւ տնտեսական մրցակցության սահմանափակմանը: Բացի այս, արձանագրվել է տեխնիկական բնութագրերով սահմանված չափորոշիչների՝ միայն կոնկրետ մեկ սուբյեկտի կողմից արտադրվող փոխադրամիջոցների չափորոշիչներին համապատասխանելու հավանականությունը, ինչը կարող է վկայել այլ տնտեսավարող սուբյեկտների հետ համաձայնության ձեռքբերման հնարավորության մասին:

Բայց նկատենք, որ այս ստուգումներով ինչ էլ պարզվի, վերաբերելու է նախկին քաղաքապետ Հայկ Մարությանին. չէ՞ որ ինքնակամ շինություններն ապամոնտաժողը եւ նոր ավտոբուսներ ձեռք բերողը նախկին քաղաքապետ Հայկ Մարությանն էր, ու եթե չարաշահումներ լինեն, նրա պաշտոնավարմանն են վերաբերելու:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը եւ «Պատմամշակութային հուշարձանների արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներն աղամոնտաժել են մի շարք հուշարձանների եւ դրանց պահպանական գոտիներում ապօրինի տեղադրված նոր խաչերը, խաչքարերը եւ նոր կառուցված շինությունները:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ բազմաթիվ են դեպքերը, երբ պատմության եւ մշակույթի հուշարձանների տարածքներում ու դրանց պահպանական գոտիներում, խախտելով ոլորտի օրենսդրությունը, տեղադրվում են նոր խաչքարեր, մետաղական խաչեր կամ նոր կառույցներ, որոնք ոչ միայն խաթարում են հուշարձանի պատմական միջավայրն ու տեսքը, այլեւ մեծ վնաս են հասցնում հուշարձաններին:

Կարեւորելով խնդրի կարգավորումը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան ստորաբաժանումներն ապօրինի շինությունների հեռացման ուղղությամբ հետեւողական աշխատանքներ են իրականացնում՝ դրանցում ներգրավելով նաեւ ապօրինի շինություններ տեղադրած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, հուշարձանների սեփականատերերին կամ օգտագործողներին:

Ընթացիկ տարում ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության եւ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ հեռացվել են ՀՀ Արարատի մարզի Աղջոց եւ Հավուց թառ («Խոսրովի անտառ պետական արգելոց»), Կոտայքի մարզի Թեղենյաց, Տավուշի մարզի Խորանաշատ վանական համալիրների տարածքների մետաղական խաչերն ու խաչքարերը, Ծաղկաձոր համայնքի Կեչառիս վանական համալիրի տարածքում կառուցված կաթսայատունը եւ այլն:

Համաձայն «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի՝ «Հուշարձաններին կամ դրանց պահպանական գոտիներին վնաս պատճառած իրավաբանական եւ ֆիզիկական անձինք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»: Վերջիններիս ներկայացվում է օրենսդրության պահանջը՝ առաջարկելով անվնաս հեռացնել նոր տեղադրված օբյեկտները կամ տեղափոխել այլ վայր: Հուշարձանների տարածքներում եւ դրանց պահպանման գոտիներում նոր տեղադրած կառույցների հեղինակներին չբացահայտելու դեպքում լիազոր մարմինն իր միջոցներով հեռացնում է ապօրինի տեղադրված կառույցները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը կոչ է անում եւ հորդորում ձեռնպահ մնալ հուշարձանների տարածքներում կամ դրանց պահպանական գոտիներում ապօրինի գործողություններ կատարելուց (նոր խաչքարերի, խաչերի, նորակառույց շինությունների տեղադրում, առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքների իրականացում, գանձագողություն), իսկ նման օրինախախտումներ նկատելու դեպքում ահազանգել լիազոր մարմնին:

Հուշարձանների տարածքներից ապօրինի տեղադրված կառույցների հեռացման աշխատանքները լինելու են շարունակական:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 14-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔ

Սուբվենցիոն աշխատանքների մշտադիտարկման աշխատանքային խմբի անդամներն այցելել են Անի համայնքի Շիրակավան բնակավայր՝ հետեւելու ընթացքի մեջ գտնվող Անի համայնքի Շիրակավան բնակավայրում տնամերձ հողամասերի ոռոգման փակ համակարգի կառուցման սուբվենցիոն ծրագրի ընթացքին: Շիրակի մարզպետարանից հայտնում են, որ ծրագրի ընդհանուր արժեքը 128 մլն 348 հազար դրամ է, գումարի 70 տոկոսը կառավարությունն է տալիս: Աշխատանքների արդյունքում նախատեսվում է ոռոգել մոտ 60 հա, ոռոգման ցանցի երկարությունը 4,57 կմ է, ծրագրից օգտվելու է շուրջ 215 տնտեսություն:

ՏԱՐԲԵՐ ՆԱԽԱԳԾԵՐ

Մայրաքաղաքի հնավայրերի պահպանման ու հանրահռչակման նպատակով համայնքը միջազգային ու տեղական գործընկերների հետ տարբեր նախագծեր է իրականացնում: Քաղաքապետարանից հայտնում են, որ Երեւանի հազարամյակների պատմությունը վկայող Ուրարտական ժամանակաշրջանում կառուցված Կարմիր բլուրում եւս մի շարք ծրագրեր են մեկնարկել: Հնավայր այցելած Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը նախաձեռնություններին ծանոթանում է տեղում: Շուրջ մեկ ամիս է՝ «Կարմիր բլուր»-ում մեկնարկել են հայ-ավստրիական հնագիտական արշավախմբի պեղումները: Բացի այդ, մեկ այլ ծրագիր է իրականացվում ֆրանսիացի գործընկերների հետ, որը թույլ կտա ճիշտ նույն տեխնոլոգիայով վերականգնել Երեւանի հնավայրերը, մեկնարկը կտրվի «Կարմիր բլուրից»: «Այսօր «Կարմիր բլուրը» նոր շունչ է առնում, վերակենդանանում է, մարդիկ գալիս են ընտանիքներով, այցելուների հոսքն է շատացել: Եթե լավ մարկետինգ անենք, ինքը աշխարհի եզակի հուշարձաններից մեկն է»,- ասել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Միքայել Բադալյանը:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի համաձայն՝ «անվտանգ սննդամթերքը» պետք է պահպանի մակնշման մեջ ներկայացված իր սպառողական հատկությունները, իսկ ժամկետի լրանալուն պես սննդամթերքը համարվում է վտանգավոր եւ պիտանի չէ ըստ նպատակային նշանակության օգտագործման համար: Քաղաքապետարանից հայտնում են, որ վտանգավոր սննդամթերքն իր հերթին ենթակա է հետկանչի՝ սահմանված կարգով օգտահանելու կամ ոչնչացնելու համար, սակայն որոշ տնտեսվարողներ, անտեսելով օրենքը, շարունակում են վաճառել առանց պիտանիության ժամկետի մակնշման կամ պիտանիության ժամկետը լրացած ապրանքներ: Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից: Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի առեւտրի եւ ծառայությունների վարչության աշխատակիցների հետեւողական աշխատանքների շնորհիվ երեք տնտեսվարողների մոտ խախտումներ են արձանագրվել սննդի անվտանգության ոլորտում: Հայտնաբերվել են բազմաթիվ ժամկետանց, պիտանիությունը կորցրած եւ բորբոսապատ մթերքներ: Կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, որի շրջանակներում իրավախախտները ենթարկվելու են վարչական պատասխանատվության:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀԱՇՎԻ Է ԱՌՆՎԵԼՈՒ

ՀՀ առողջապահության նախարարության հետ քննարկման արդյունքում որոշվել է փոփոխություն կատարել 2021թ. հոկտեմբերի 11-ի N 76-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական հաստատությունների սաների ընդունելության կարգ»-ում. այդ մասին ArmLur.am-ը տեղեկացավ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետ Արսեն Բաղդասարյանից:

Առաջարկվող փոփոխությունը վերաբերում է կարգի այն դրույթին, ըստ որի՝ ուսումնական տարվա ընթացքում, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում սանն ազատվում է մանկապարտեզից: Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է, որ առողջապահական հաստատության կողմից տրված տեղեկանքի առկայության դեպքում սաների բացակայությունների հաշվարկում չի ներառվելու այդ ժամանակահատվածը:

Այսինքն՝նոր փոփոխությամբ 75 աշխատանքային օրվան կգումարվեն նաեւ առողջապահական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիմքով բացակայության օրերը, որոնց համար, սակայն, եւս կսահմանվի առավելագույն ժամկետ: Արսեն Բաղդասարյանի խոսքով՝ նախադպրոցական հաստատությունների տեղերը բավարար չեն բոլոր երեխաներին ընդունելու համար: Շատ երեխաներ այս պահին հերթագրված են եւ սպասում են նախադպրոցական հաստատություն հաճախելու իրենց հերթին. միայն Երեւանում հերթագրված է շուրջ 10 հազար երեխա:

«Ստեղծվում է իրավիճակ, երբ նախադպրոցական ծառայության մեջ ընդգրկված երեխաները փաստացի չեն հաճախում մանկապարտեզ այն դեպքում, երբ կան երեխաներ, որոնք հերթում սպասում են եւ չեն կարողանում ընդգրկվել: Տվյալ պարագայում հիվանդության հիմքով կամ որեւէ այլ պատճառով չհաճախելու դեպքում տրված էր համընդհանուր կարգավորում: Այժմ այլ մոտեցում ենք ցուցաբերելու՝ հաշվի առնելով բացակայության պատճառը»,- պարզաբանել է վարչության պետը: Արսեն Բաղդասարյանը մանրամասնել է նաեւ, որ ՀՀ կառավարության ծրագրով նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը մինչեւ 2026 թվականը պետք է կազմի 85 տոկոս: Այդ նպատակով մինչեւ 2026 թվականը նախատեսվում է վերակառուցել կամ կառուցել 500 նախադպրոցական հաստատություն: Այս պահին 92 մանկապարտեզներում նորոգման եւ շինարարության աշխատանքներ են ընթանում, որոնցից մի մասի աշխատանքները կավարտվեն առաջիկայում:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ մանկապարտեզի ծնողներն ահազագնել էինք՝ Երեւանի մանկապարտեզների սաների ծնողները հայտնվել են անհարմար դրության մեջ. պատճառը կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի որոշումն է: Խոսքը 2021 թվականի հոկտեմբերի 11-ի 76-Ն որոշումն է, ըստ որի՝ ուսումնական տարվա ընթացքում սանի՝ անկախ պատճառից 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում, ըստ կրթության նախարարի որոշման, հարգելի չի համարվում երեխայի բացական անգամ այն դեպքում, երբ երեխան հիվանդ է եղել եւ ներկայացրել է բժշկի տեղեկանք՝ այդ մասին վկայող:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ

ԿԲԵՌՆԱԹԱՓՎԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՂՈՏԱՆ

Մամիկոնյանց փողոցը Արամ Խաչատրյան փողոցին կապող նոր ճանապարհահատվածի շինարարությունն ավարտական փուլում է: Այն կերջանցի ու զգալիորեն կբեռնաթափի Կոմիտասի պողոտան:

«Աշխատանքները սկսել են ապրիլ-մայիսից: Ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 265 գծմ, երթեւեկելի մասի լայնությունը 9մ է: Նախատեսված է նաեւ կես մետր լայնությամբ տեխնիկական մայթ եւ 1մ լայնությամբ հետիոտնային մայթ»,- ասում է «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ղեկավար Շողիկ Երանյանը:

Ամիսներ առաջ նոր ճանապարհի տեղում հիմնականում ավտոտնակներ էին, նաեւ բնակելի տներ: Կառավարության որոշմամբ տարածքը ճանաչվեց հանրային գերակա շահ, տեղում իրացման աշխատանքներ արվեցին:

Երկու փողոցներն իրար կմիանան նոր կամրջով: Շինարարության ամենակարեւոր ու պատասխանատու հատվածը կամրջի կառուցումն է:

«Միաձույլ երկաթբետոնե կառուցվածք է ունենալու կամուրջը: Այն կլինի 11 մ լայնությամբ, որի 9մ երթեւեկելին է: Կառուցվող կամուրջը կարող է ծառայել 100 տարի»,- նշում է «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի շինարարության կազմակերպման եւ վերահսկման բաժնի պետ Գագիկ Մարտիրոսյանը:

Ճանապարհի արտաքին լուսավորության ցանցն անցկացվել է ստորգետնյա, լուսատուներն էլ կլինեն էներգախնայող լեդ տեսակի:

Հաշվի առնելով տեղանքի առանձնահատկությունները՝ ճանապարհահատվածի ամբողջ երկայնքով հենապատեր են կառուցվում, կամուրջի հատվածից մինչեւ խաչմերուկ էլ կանցկացվի հեղեղատար համակարգ:

«Ճանապարհի կառուցման աշխատանքներն իրականացվել են ամբողջությամբ Երեւան համայնքի բյուջեի միջոցներով: Շինարարությունը նախատեսվում է ավարտել նոյեմբերի կեսերին»,-նշում է Շողիկ Երանյանը:

Նոր ճանապարհների կառուցումն ու տրանսպորտային հոսքերից քաղաքի կենտրոնական հատվածների բեռնաթափումը, խցանումների նվազեցումն ու բնակիչների հարմարավետ տեղաշարժը քաղաքային իշխանության առաջնահերթություններից է: Համայնքն այսօր քննարկում է ճանապարհային մի շարք նոր նախագծեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ԴՐԱԽՏԻ ԴԱՐՊԱՍԸ»

AMC ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՑԱՆՑՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ իրենց աջակցությամբ նկարահանված ռեժիսոր Զիվան Ավետիսյանի «Դրախտի դարպասը» ֆիլմը 2022 թ. հոկտեմբերի 21-ից կցուցադրվի ԱՄՆ ամենախոշոր AMC-ի կինոթատրոնների ցանցի 10 խոշորագույն քաղաքներում՝ Գլենդել, Դեթրոյդ, Լաս Վեգաս, Օրանժ, Բոստոն եւ այլն:

Այս ցանցի կինոթատրոններն իրենց տարեկան ծրագրում ընդգրկում են 4-8 արտասահմանյան ֆիլմեր. այս տարի ցանկում է նաեւ հայկական արտադրության «Դրախտի դարպասը» ֆիլմը:

Նշենք, որ «Դրախտի դարպասը» ֆիլմն ընդգրկվել էր սեպտեմբերի 2-3-ն անցկացվող «Be Epic» Լոնդոնի միջազգային կինոփառատոնում, որտեղ ցուցադրվել է որպես փառատոնի բացման ֆիլմ՝ հաղթելով «Լավագույն օպերատորական աշխատանք» անվանակարգում:

«Դրախտի դարպասը» ֆիլմը Զիվան Ավետիսյանի արցախյան թեմատիկայով երրորդ լիամետրաժ ֆիլմն է: Այն ութ երկրի (Հայաստան, Լիտվա, Գերմանիա, Ֆրանսիա, Բուլղարիա, Չեխիա, Իտալիա, ԱՄՆ) համատեղ արտադրություն է:

Ըստ ֆիլմի բովանդակության՝ գերմանացի լրագրող Ռոբերտ Ստերնվալը (50 տարեկան) 2016 թ.-ին վերադառնում է Արցախ՝ լուսաբանելու քսաներկու տարվա ընդմիջումից հետո վերսկսված պատերազմը: Լրագրողական հետաքննության արդյունքում ծանոթանում է երիտասարդ օպերային երգչուհի Սոֆյա Մարտիի (35 տարեկան) հետ: Ռոբերտի եւ Սոֆյայի հաճախակի հանդիպումներն արթնացնում են փոխադարձ սիրո զգացմունք, սակայն պարզվում է, որ Սոֆյան անհայտ կորած ֆոտոլրագրող Էդգար Մարտիրոսյանի աղջիկն է: 1992թ.-ին՝ Թալիշի անկման օրը, Ռոբերտը ֆոտոլրագրողին թողել է գյուղում՝ գերեվարության մեջ, ապա յուրացրել նրա՝ մարտի դաշտում արված լուսանկարները: Ֆիլմի ռեժիսորը Զիվան Ավետիսյանն է, սցենարիստներ՝ Արտավազդ Եղիազարյան, Մկո Մալխասյան, օպերատոր՝ Ռիտիս Կուրկուլիս, դերասաններ՝ Ռիխարդ Զամել, Տատյանա Սպիվակովա, Սոս Զանիբեկյան, Լեոնարդաս Պոբեդոնոսցեսաս, Նաիրա Զաքարյան, Նինա Կրոնյագեր, Բենեդիկտ Ֆրեյթագ, պրոդյուսերներ՝ Մասիս Բաղդասարյան, Կեստուտիս Դրազդաուսկաս, ընկերություններ՝ «Ֆիշ Այ Արթ» մշակութային հիմնադրամ, «Արթբոքս» կինոընկերություն:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԵՏՄԱՀՈՒ ՀՈՒՇԱՄԵԴԱԼ

ՀԱՆՁՆՎԵԼ Է ԵՐԳՉԻ ԵՂԲՈՐԸ

Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հոկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Հայկ Հակոբյանի (Հայկո) ոլորգեւը՝ հետմահու հուշամեդալը, հանձնել է երգչի եղբայր Վահե Հակոբյանին:

Շնորհակալություն հայտնելով Ալեն Սիմոնյանին՝ Վահե Հակոբյանը նշել է, որ հուշամեդալն իր պատվավոր տեղը կունենա Հայկոյի ստուդիայի հատուկ անկյունում: Նա նշել է, որ ստուդիան Հայկոյի մահից հետո վերածվել է թանգարանի, որտեղ այցելում են երգարվեստի պրոֆեսիոնալներն ու նոր սերնդի շնորհալի երիտասարդները:

Հիշեցնենք, որ Ալեն Սիմոնյանը հայ մշակույթի եւ երգարվեստի զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար երգիչ եւ երգահան Հայկ Հակոբյանին (Հայկո) հետմահու պարգեւատրել էր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալով:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԵՐԳՉՈՒՀԻՆԵՐԻՆ

Պաշտոնական Կիեւը պատժամիջոցներ է կիրառել ուկրաինացի երգչուհիներ Անի Լորակի, Թաիսյա Պովալիյի եւ Աննա Սեդոկովայի, ինչպես նաեւ հեռուստահաղորդավարուհի Ռեգինա Տոդորենկոյի նկատմամբ: Համապատասխան հրամանագիրը հրապարակվել է երկրի նախագահ Վոլոդիմիր Զելենսկիի պաշտոնական կայքում: Սահմանափակումները ներառում են 15 միջոցներ, ինչպիսիք են ակտիվների արգելափակումը, պետության տարածքից կապիտալի դուրսբերման արգելքը, հողի ձեռքբերումը, սեփականաշնորհումը եւ վարձակալությունը, թույլտվությունների եւ լիցենզիաների չեղյալ հայտարարումը: Կիեւը որոշել է նաեւ զրկել նրանց Ուկրաինայի պետական մրցանակներից: Պատժամիջոցները կիրառվում են հինգ տարի ժամկետով: Ավելի վաղ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին հաստատել էր Ազգային անվտանգության եւ պաշտպանության խորհրդի (ԱԱԽ) որոշումը՝ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի կնոջ եւ դստեր, ինչպես նաեւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի կնոջ՝Գալինայի նկատմամբ 10 տարի ժամկետով պատժամիջոցներ կիրառելու մասին: Նրա նկատմամբ կա 13 խափանման միջոց: Ընդհանուր առմամբ, Ուկրաինայի ղեկավարը պատժամիջոցներ է կիրառել 2507 ֆիզիկական անձանց եւ 1374 ընկերությունների նկատմամբ:

ԱԼԻՄԵՆՏԻ ՉԱՓԸ

Երգչուհի Պելագեիի նախկին ամուսինը՝ Իվան Տելեգինը, դիմել է դատարան՝իրենց դստեր՝ Թաիսիայի ալիմենտի չափը նվազեցնելու խնդրանքով: «Հայց է ստացվել ալիմենտի չափը ամսական աշխատավարձի եւ (կամ) այլ եկամուտների 1/4-ից 1/6-ի նվազեցնելու մասին», - ասվում է Մոսկվայի դատարանի մամուլի ծառայության տարածած հաղորդագրության մեջ: Ալիմենտը կրճատելու պատճառներն անհայտ են: Ավելի վաղ երգչուհին շահել էր դատը՝նախկին ամուսնու՝Իվան Տելեգինի դեմ: Հոկեյիստը բողոք է ներկայացրել այն բանից հետո, երբ մայիսին պարտվել է համատեղ ունեցվածքի բաժանման դատական գործում: Պելագեիի եւ Տելեգինի դուստրը ծնվել է 2017 թվականին, որից երկու տարի անց զույգը բաժանվել է:

ՄԵՐԻԱԼԻ ԹՐԵՅԼԵՐ

Netflix հոսքային ծառայությունը հրապարակել է «Թագը» սերիալի հինգերորդ եթերաշրջանի երկար սպասված թրեյլերը: Դրվագները հոսքային ծառայությունում հասանելի կլինեն նոյեմբերի 9-ից: Ֆիլմի գործողություններն այս անգամ ծավալվում են 1990-ականներին, որը բրիտանական թագավորական ընտանիքի համար ամենաինտենսիվ եւ մութ տասնամյակներից մեկն է: Արքայադուստր Դիանան (Էլիզաբեթ Դեբիցկի) որոշում է վերջնականապես ամուսնալուծվել Չարլզից (Դոմինիկ Ուեսթ): Սա հակասությունների է հանգեցնում Էլիզաբեթ II-ի (Իմելդա Ստաունթոն) եւ նրա շրջապատի հետ, որոնք մտադիր են պահպանել հանրային կերպարը: Եթերաշրջանում նկարահանվել են «Օսկարի» հավակնորդներ Ջոնաթան Փրայսը (Արքայազն Ֆիլիպ) եւ Լեսլի Մանվիլը (Արքայադուստր Մարգարետ), Ջոնի Լի Միլլերը (վարչապետ Ջոն Մեյջոր), Օլիվիա Ուիլյամսը (Կամիլա Փարքեր-Բոուլզ) եւ այլք:

● *Հոկտեմբերի 25-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում տեղի կունենա ««Զարթոնք». Վահան Տերյան» պոեզիայի երեկոն: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ պետք է անի անձը կենսաթոշակի անցնելու համար:

Լիանա Օհանյան (61 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կեսաթոշակ նշանակող մարմին: Այսպես, տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարանիշը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ դայմաններով կարող եմ ստանալ ուսանողական վարկեր:

Հայկ Մարտիրոսյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս ծրագիրը կրթության ֆինանսավորման այլընտրանքային գործիք է, որ հնարավորություն կտա ձեզ ձեռք բերել վարկեր ուսումնառության ընթացքում եւ դրանց հիմնական մասը մարել ուսումնառության ավարտից հետո: Ծրագրի շրջանակում ուսանողներին վարկեր են տրամադրվում 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որից 2 տոկոսը սուբսիդավորում է պետությունը, իսկ մեկ տարվա ընթացքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների դեպքում սուբսիդավորումը կկազմի 3 տոկոս: Վարկերը տրամադրվում են 10 տարի մարման ժամկետով՝ սահմանելով արտոնյալ ժամկետ՝ ուսումնառության ընթացքում առավելագույնը 4 տարվա համար, ինչը նշանակում է, որ այս ընթացքում մայր գումարի մարում տեղի չի ունենում, վճարվում են միայն տոկոսադրույքները: Յուրաքանչյուր ուսանողի հաշվով նախատեսված է առավելագույնը 1.800.000 դրամ՝ առավելագույնը 4 մասնաբաժնով, սակայն ոչ ավելի, քան 450 հազար դրամը՝ կախված յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված ուսման վարձավճարի չափից:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել «Բնակարան՝ երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հոկտեմբերի 21-ին՝ ժամը 10:00-ի դրությամբ, Աշոցքի տարածաշրջանի ավտոճանապարհներին ձնախառն անձրեւ է տեղացել: Ձմեռը այս տարի մի փոքր վաղ շտապել է հյուրընկալվել Աշոցքում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: